«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ներառական կրթության իրականացման ուղիները հանրակրթական դպրոցներում

ԱՌԱՐԿԱ՝ Դասվար

ՀԵՂԻՆԱԿ՝ Մանուկյան Անահիտ Նորայրի

ՄԱՐԶ՝ Արարատ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Նոյակերտի միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն 3

2. Հասկացություն ներառական կրթության մասին 4

3. Ներառական կրթության կազմակերպումը հանրակրթական ուսումնական հաստատությունում . . . .…… 9

4. Եզրակացություն 13

5. Գրականություն 14

Ներածություն

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունն իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների թիվը հանրապետությունում տարեցտարի աճում է: Այժմ Հայաստանում գործում են ներառական ավելի քան 60 դպրոցներ, որոնցում սովորում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող շուրջ 2000 երեխա:

Այսօր Հայաստանը միակ երկիրն է տարածաշրջանում, որն արդեն ունի ներառական կրթության փորձը և այն դարձրել է պետական քաղաքականության կարևոր մասը: ԱՊՀ երկրներում բազմիցս ներկայացվել են մեր երկրի ձեռքբերումներն այս ոլորտում, որտեղ Հայաստանը շարունակում է մնալ առաջատարը:

Երեխաները, անկախ հաշմանդամ լինելուց կամ կրթական դժվարություններ ունենալուց, դպրոցն ավարտելուց հետո որոշակի դերակատարություն ունեն հասարակության կյանքում և վաղ սկիզբը հանրակրթական խաղախմբերում կամ մսուրներում, որոնց հաջորդում են միջնակարգ դպրոցն ու քոլեջը, լավագույն նախապատրաստությունն է ինտեգրված կյանքի համար: Հաշմանդամ երեխաներն ունեն նույն խմբին պատկանելու նույնպիսի իրավունք, ինչպես մյուսները:Առանձնացված ուսուցումը սահմանափակում է ինքնաարտահայտման իրավունքներն ու հնարավորությունները:

Մենք դեռևս շատ անելիքներ ունենք ներառական կրթության բնագավառում: Մենք գնահատում ենք այսօր բոլոր երեխաներին և նրանց կարիքները: Եվ այդպիսով կկարողանանաք յուրաքանչյուր երեխայի հետ առանձին աշխատել և բավարարել նրանցից յուրաքանչյուրի կարիքները: Բոլոր դպրոցները պետք է ընդգրկեն երեխաներին, ովքեր ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեպաներին:

Հասկացություն ներառական կրթության մասին

Ներառական կրթությունը գործընթաց է, որը հենվում է բոլոր երեխաների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք և սոցիալապես սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց կրթություն ստանալու իրավունքի վրա: Այն արձա·անքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային ու համայնքային կյանքին: Այն ենթադրում է փոփոխություններ և բարեփոխումներ կրթության բովանդակության, մոտեցումների, կառույցների և մեթոդական համակար·ի մեջ, տարածվում է համապատասխան տարիքային խմբերի բոլոր երեխաների վրա: Ներառական կրթությունը ելնում է այն համոզմունքից, որ բոլոր երեխաներին կրթելը հանրակրթական համակար·ի պարտականությունն է:

Ներառումը լրացնում է հատուկ կրթությանը: Հատուկ կրթությունը զար·ացել է առանձին փուլերով, որոնց ընթացքում ուսումնասիրվել են հաշմանդամ երեխաների և ուսման դժվարություններ ունեցող սովորողների կարիքների բավարարման տարբեր ուղիներ: Որոշ դեպքերում հատուկ կրթությունը լրացրել է հանրակրթությանը, սակայն իրականացվել է մեկուսացված:

Վերջին տարիներին կասկածի տակ է դրվել առանձնացված կրթական համակար·երի նպատակահարմարությունը ինչպես մարդու իրավունքների սահմանափակման, այնպես էլ կրթության որակի ապահովման տեսանկյունից:

Ներկայումս կիրառվող մեթոդներն ու ծրագրերն ի վիճակի չեն բավարարելու մեկուսացված երեխաների ու դեռահասների կրթական կարիքները: Անցյալում այդ նպատակով դիմում էին հատուկ ծրագրերի, հաստատությունների և մասնագետ մանկավարժների օգնությանը: Լավագույն նկատառումներով իրականացվող նման տարբերակման հետևանքը հաճախ լինում էր երեխայի (դեռահասի) մեկուսացումը:

Կրթությունը պետք է համարվի ցանկացած անձի զարգացմանը նպաստող միջոց՝ անկախ ֆիզիկական կամ այլ խոչընդոտներից: Ուստի, որևէ տեսակի հաշմանդամություն չի կարող արգելք լինել մարդու՝ կրթություն ստանալու իրավունքի համար:

Այսպիսով, ներառումը ենթադրում է մի գործընթաց, որն ուղղված է բոլոր սովորողների կրթական բոլոր կարիքների բավարարմանը, ներառյալ նրանց, ովքեր ենթակա են մեկուսացման կամ բացառման վտան·ի:

Առանձնացված հատուկ դպրոցներում երեխաներին ուսուցանելը հակասում է տան, ընտանիքի և համայնքի կյանքին մասնակցության նրանց իրավունքին: Չնայած հատուկ դպրոցների կրթական ծառայությունների որոշ առավելություններին՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բաժանումը ընտանիքից ու տնից վկայում է այդպիսի մարդկանց նկատմամբ հասարակության մեջ գոյություն ունեցող նախապաշարմունքների մասին:

Ներառումը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հնարավորություն կտա կրթություն ստանալ իրենց համայնքներում և չմեկուսանալ ընտանիքներից:

Ներառական կրթությունը հաշմանդամության սոցիալական մոդելի յուրօրինակ ածանցյալն է: Այն ընդունում է, որ բոլոր երեխաները տարբեր են, և դպրոցներն ու հանրակրթական համակարգը պետք է հարմարվեն բոլոր սովորողների (զարգացման հապաղումներով, առանձնահատուկ կարիքներով և առանց դրանց) անհատական պահանջմունքներին:

Սակայն ներառում չի նշանակում բոլորին ձուլելու կամ միատեսակ դարձնելու ձգտում:

Այն ընդունում է, որ երեխաները սովորում են տարբեր արագությամբ, իսկ ուսուցիչներին անհրաժեշտ են հատուկ հմտություններ՝ ուսուցման գործընթացի ճկունությունն ապահովելու համար: Պարզապես, երեխաներին անհրաժեշտ է հասկանալի, մատչելի դասավանդում: Իսկ դա իր հերթին ենթադրում է երեխայի առանձնահատկություններին, անհատական կրթական պահանջմունքներին, զարգացման ընթացքին, ընդունակություններին և կարողություններին համապատասխանող տարբեր մեթոդների կիրառում:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդգրկումը հանրակրթական դպրոցներ կմղի ուսուցիչներին կիրառելու նոր՝ անձնակենտրոն ուսուցման մեթոդներ՝ ապահովելով մեծ թվով մասնակիցների ընդգրկվածություն ուսուցման գործընթացում:

Որոշ ուսուցիչներ կարծում են, թե կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման համար իրենց անհրաժեշտ կլինեն հատուկ հմտություններ: Սակայն փորձը ցույց է տալիս, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հանրակրթական գործընթացի մեջ ներգրավելու համար ընդամենն անհրաժեշտ է որակյալ, հասկանալի և մատչելի

դասավանդում, որը և նպաստում է բոլոր սովորողների ակտիվության և կրթության որակի բարձրացմանը:

Ինչ խոսք, ի լրումն այս ամենի՝ անհրաժեշտություն կառաջանա հատուկ տեխնիկական օժանդակության և երեխայի զար·ացման կոնկրետ խանգարումներով պայմանավորված՝ հատուկ սարքավորումների ու տեխնիկական միջոցների ներդրման: Այս գործունեության դրական արդյունք կարող է դառնալ դասավանդման որակի բարձրացումն ու սովորողների ձեռքբերումները (այդ թվում նաև՝ կրթական գործընթացից դուրս մնացած և ցածր առաջադիմությամբ սովորողների թվի նվազումը):

Չի կարելի ժխտել, որ ներառական կրթությունը կարող է բարձրացնել կրթության որակը բոլորի համար:

Հասարակության մեջ բավական ամուր է արմատավորված առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց նկատմամբ կանխակալ վերաբերմունքը: Այդ վերաբերմունքի պատճառները բազմազան են. օրինակ՝ տեղեկատվության պակասը, գիտելիքների բացակայությունը, նրանց հարևանությամբ ապրելու փորձի պակասը և այլն: Նման պատճառներով առաջացած կարծրատիպերը կոտրելը բավական դժվար է: Փորձը ցույց է տալիս, որ համապատասխան բարենպաստ մթնոլորտում երեխաներն առավել հանդուրժող են, քան մեծահասակները: Միևնույն դպրոցում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման կազմակերպումը կձևավորի անկանխակալ վերաբերմունք նրանց նկատմամբ: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաները օ·ուտ կստանան այդ շփումից: Դեռևս վաղ հասակից նրանք կսովորեն ավելի հանդուրժող լինել միմյանց նկատմամբ, որի արդյունքում կբարձրանա նրանց սոցիալական պատասխանատվությունը: Արդյունքում՝ ապա·ա քաղաքացիների մեջ կարմատավորվի այն գիտակցումը, որ առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձինք հասարակության լիիրավ անդամներ են:

Ներառական կրթությունը կօգնի հաղթահարելու խտրականությունը:

Հաշմանդամությունն ու աղքատությունը սերտորեն փոխկապակցված են: Աղքատ երեխան առավել պասիվ է, դժվար է նրանից ակնկալել ակտիվ միջամտություն կամ աջակցություն հասարակական որևէ •ործընթացի: Հաշմանդամ երեխաներ ունեցող ընտանիքների համար ավելի մեծ է աղքատության եզրին հայտնվելու վտանգը (տարբեր պատճառներով՝ տեղաշարժման, աշխատանքի, երեխայի խնամքի հետ կապված խնդիրների և այլն): Որքան աղքատ է ընտանիքը, այնքան մեծ է հասարակությունից նրա անդամների մեկուսացման վտանգը: Այս պարա•այում կրթությունը կարող է տալ գործնական հմտություններ և գիտելիքներ՝ աղքատությունը և դրանից բխող արատավոր երևույթները հաղթահարելու համար: Հատուկ կարիքներով, ինչպես նաև աղքատ ընտանիքների երեխաներին ու մեծահասակներին ներառական կրթությունը հնարավորություն է տալիս դիմակայելու նախապաշարումներին, օգնում նրանց դուրս գալու ստվերից, սեփական տեսակետն արտահայտելիս լինելու ավելի ինքնավստահ, կառուցելու սեփական ապագան առանց այլոց օժանդակության և դառնալու հասարակության լիիրավ անդամ:

Ներառական կրթությունը կնպաստի աղքատության պատճառով առաջացող օտարացման երևույթի վերացմանը:

Հաշմանդամության ասպարեզում միջազ•ային քաղաքականությամբ զբաղվող «Փրկեք երեխաներին» (Save the children՝ - Մեծ Բրիտանիա) հիմնադրամի հետազոտությունների համաձայն՝ հաշմանդամության ծրա•երի մշակման մեթոդիկայում ներառական կրթությունը արտացոլում է երկու ուղղություն՝

1) աջակցություն նպատակային այն նախաձեռնություններին, որոնք միտված են հատուկ կարիքներ ունեցող երեխաների ու նրանց ընտանիքների ներուժն ուղղորդելու և իրացնելու նպատակով ծավալվող գործունեության խթանմանը, հասարակական կյանքին նրանց լիիրավ մասնակցությանը, իրավունքների պաշտպանությանը.

2) մարտահրավեր հասարակության մեջ հատուկ կարիքներով մարդկանց նկատմամբ ձևավորված և կարծրացած կանխակալ վերաբերմունքին, օգնություն ծնողներին՝ լիարժեք ընկալելու իրենց երեխաների խնդիրները, աջակցություն հասարակության մեջ վերջիններիս առավել ակտիվ ներառմանը:

Ներառական կրթության հիմքում ընկած •աղափարախոսությունը բացառում է երեխաների նկատմամբ որևէ խտրականություն, ապահովում հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց նկատմամբ, ստեղծում հատուկ պայմաններ հատուկ պահանջմունքներ ունեցող երեխաների համար:

Փորձը ցույց է տալիս, որ երեխաների ինչ-որ մաս դուրս է մնում կրթական ցանկացած կոշտ համակարգից, քանի որ այդպիսի համակար•ը պատրաստ չէ երեխաների կրթական անհատական պահանջմունքների բավարարմանը: Հանրակրթությունից դուրս մնացած երեխաների թիվը կազմում է դպրոցահասակ երեխաների ընդհանուր թվի 15%-ը: Ի հետևանք՝ դուրս մնացած երեխաները մեկուսացվում և հեռացվում են ընդհանուր համակարգից: Պետք է ընդունել, որ ոչ թե երեխաներն են անհաջողության մատնվում, այլ համակարգն է հեռացնում երեխաներին: Ներառական մոտեցումները կարող են աջակցել այդ երեխաներին ուսման մեջ հաջողության հասնելու, ինչը նրանց սոցիալականացման համար լավ նախադրյալներ կստեղծի:

Ներառական կրթությունը ընդհանուր կրթության զարգացման գործընթաց է, որը ենթադրում է բոլորի համար կրթության մատչելիություն՝ սովորողների տարբեր կարիքներին հարմարվելու առումով, ինչն ապահովում է սահմանափակ սոցիալական հնարավորություններ ունեցող երեխաների համար կրթության մատչելիություն: Ներառական կրթությունը որդե•րում է երեխայակենտրոն մեթոդաբանություն, համաձայն որի բոլոր երեխաները, ըստ իրենց կրթական պահանջների, անհատականություններ են: Ներառական կրթությունը ուսուցման ոլորտում ջանում է մշակել այնպիսի մոտեցումներ, որոնք տարատեսակ պահանջմունքներ բավարարելու հարցում կլինեն առավել ճկուն: Եթե ներառական կրթության ներդրած փոփոխությունների արդյունքում ուսուցումն ու ուսումնառությունը ավելի արդյունավետ դառնան, ապա կշահեն բոլոր երեխաները (ոչ միայն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողները):

Ուսուցումը ներառական դպրոցներում հնարավորություն է ընձեռում երեխաներին ձեռք բերել անձնական կենսափորձի վրա հիմնված գիտելիքներ մարդու իրավունքների մասին (թեպետ դա նրանց հատուկ չի դասավանդվում), ինչը հանգեցնում է խտրական դրսևորումների նվազեցման, քանի որ երեխաները սովորում են ճիշտ հարաբերվել իրար հետ, ճանաչել և ընդունել միմյանց տարբերությունները:

Ներառական կրթությունը նաև դինամիկ և զար•ացող գործընթաց է: Այն ենթադրում է բազմազանություններին արձա•անքելու այնպիսի արդյունավետ ձևերի որոնում, որոնք հնարավորություն կտան անընդհատ դիտարկումների և վերլուծությունների միջոցով

ճիշտ գնահատելու սովորողների կարիքները՝ ստեղծված իրավիճակներում կողմնորոշվելու և համարժեք քայլեր ձեռնարկելու համար:

Այսպիսով, ներառական կրթությունը՝

1. ընդունում է, որ բոլոր երեխաները կարող են սովորել.
2. ընդունում և հարգում է երեխաների տարբերությունները՝ տարիքը, սեռը, ծագումը, լեզուն, զարգացման խնդիրները, անհատական առանձնահատկությունները, ընտանիքի սոցիալական կարգավիճակը և այլն.
3. նպաստում է բոլոր երեխաների կարիքներին համապատասխան կրթական գործընթացի կազմակերպմանն ու իրականացմանը.
4. նպաստում է ներառական հասարակության կառուցման հեռահար ռազմավարական գաղափարի իրականացմանը.
5. դինամիկ և զարգացող գործընթաց է:

Կրթության մեջ ներառումը ենթադրում է՝

1.բոլոր սովորողների կրթական կարիքների հավասար գնահատում.
2.ուսումնական, մշակութային, համայնքային միջոցառումներին սովորողների ներգրավվածության աստիճանի բարձրացում.
3.դպրոցների վարած քաղաքականության վերակառուցում և դրա համապատասխանեցում սովորողների բազմազանությանը և առանձնահատկություններին.
4.ուսուցման գործընթացում արհեստական խոչընդոտների վերացում և նրանում բոլոր սովորողների ներգրավում (չսահմանափակվելով միայն հաշմանդամ և կրթական հատուկ պահանջներ ունեցող սովորողներով).
5.խոչընդոտները հաղթահարելու փորձի ձեռքբերում, որը կոչված է ապահովելու որոշակի սովորողների մասնակցությունն ուսումնական գործընթացին՝ սովորողների համար ավելի մեծ բարեփոխումների ակնկալիքով.
6.սովորողների միջև առկա տարբերությունները ոչ թե որպես դժվար հաղթահարվող բարդության, այլ որպես կրթական գործընթացին նպաստող հանգամանքի ընդունում.
7. սեփական համայնքում կրթություն ստանալու սովորողների իրավունքի ապահովում.
8. ինչպես դպրոցի աշխատակազմի, այնպես էլ սովորողների համար ուսումնական պայմանների բարելավում.

9. արժեքների ձևավորման ու զարգացման, ինչպես նաև նվաճումների մեծացման գործում դպրոցների դերի կարևորում.
10. դպրոցների ու համայնքների միջև փոխշահավետ հարաբերությունների հաստատում.
11. կրթությունը՝ որպես հասարակության մեջ մարդու լիարժեք ներառման և ինքնադրսևորման կարևորագույն գործոնի ճանաչում:

Ներառական կրթության կազմակերպումը հանրակրթական ուսումնական հաստատությունում

Ներառական կրթության կազմակերպումը ենթադրում է ոչ միայն ընդհանուր հայեցակարգի սահմանում և ընդունում, այլև համապատասխան գործողությունների հստակ պլանավորում:
Ներառական կրթության կազմակերպման հաջող փորձը ցույց է տալիս, որ գործընթացն սկսելիս պետք է հաշվի առնել երեք հիմնական գործոն կամ բաղադրիչ՝
ա) հստակ սահմանված արժեքների, համոզմունքների, սկզբունքների ամբողջություն, որոնք զարգանում են ներառական կրթության իրականացման ողջ ընթացքում.
բ) ուսումնական հաստատության բոլոր ռեսուրսների (մարդկային, ֆինանսական, բարոյական) արդյունավետ ու նպատակաուղղված օ•տա•ործում.
•) համատեղ (դպրոց, ծնող, կրթության կառավարման պետական լիազորված մարմին) մշտադիտարկում (մոնիթորինգ)՝ ներառական կրթության որակն ու ճկունությունն ապահովելու և համակարգում կատարվող փոփոխություններին արագ արձագանքելու նպատակով:
Ներառական կրթության կազմակերպման գործընթացը պայմանականորեն կարելի է բաժանել երկու փուլի՝
ա) նախապատրաստական.
բ) իրականացման:

Նախապատրաստական փուլ

Նախապատրաստական փուլում ուսումնական հաստատության տնօրենն ապահովում է՝
1. ներառական կրթություն իրականացնելու համար ՀՀ կրթության և գիտության նախարարի թույլտվությունը.

2. կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, սահմանված կարգով բժշկահոգեբանամանկավարժական (ԲՀՄ) հանձնաժողովի եզրակացության հիման վրա վկայագիր ստացած սովորողների առկայությունը.

3. ուսումնանյութական հարմարեցված միջավայր:

Վերոնշյալ պայմանների առկայության դեպքում արդեն դպրոցում պաշտոնապես կազմակերպվում է ներառական կրթություն՝ հետևյալ հաջորդականությամբ.

1. Ներառական կրթություն կազմակերպելու համար վերապատրաստման •ործուղված մասնագետը (մասնագետները), որի վրա ժամանակավորապես կամավորության սկզունքով դրվում է դպրոցում ներառական կրթությունը համակարգողի պարտականությունը, դպրոցի բուժաշխատողի հետ ուսումնասիրում է դպրոցի բոլոր սովորողների բժշկական գործերը (Ձև 26) և առանձնացնում այն սովորողների գործերը, ովքեր ունեն մտավոր զարգացման, լեզվական, լսողական, տեսողական, հոգեբանական, հենաշարժական կամ այլ խնդիրներ:

Այս փուլում պետք է քննարկել նաև դպրոցի բոլոր ուսուցիչների կարծիքները, քանի որ կարող են լինել սովորողներ, որոնց բժշկական գործերում այս կամ այն պատճառով չի գրանցվել այդ սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:

Հայտնաբերված սովորողների բժշկական գործերն առանձնացվում են:

2. Ներառական կրթության համակար•ողի պարտականությունները կատարող անձը դպրոցի տնօրենի գիտությամբ և համաձայնությամբ հանդիպում է վերը նշված սովորողների ծնողների (օրինական ներկայացուցչի) հետ, բացատրում իրադրությունը և նրանցից վերցնում գրավոր համաձայնագիր՝ երեխային ներառական կրթության մեջ ընդգրկելու մասին:

Ծնողի անհամաձայնության դեպքում երեխային ԲՀՄ գնահատման ներկայացնել, հետևաբար՝ նաև ներառական կրթության մեջ ընդգրկել չի կարելի:

3. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները (ծնողի կամ օրինական ներկայացուցչի հետ) սահմանված կարգով ներկայանում են ԲՀՄ հանձնաժողով՝ հետևյալ փաստաթղթերով.

ա) սովորողի ծննդյան վկայականի պատճենը,

բ) սովորողի բժշկական գործի (Ձև 26) պատճենը,

գ) սովորողի ծնողի դիմումը:

Երեք և ավելի սովորողների առկայության դեպքում կարելի է ԲՀՄ հանձնաժողովը հրավիրել դպրոց:

4. ԲՀՄ հանձնաժողովի կողմից համապատասխան եզրակացություն ստացած ցանկացած թվով սովորողների առկայության դեպքում դպրոցը կարող է իրականացնել ներառական կրթություն:

5. Դպրոցի տնօրենը, սահմանված կարգով, աշխատանքային պայմանագրեր է կնքում համապատասխան մասնագետների հետ և ձևավորում բազմամասնագիտական խումբ:

6. Այնուհետև սովորողների գործերը ներկայացվում են պետական լիազորված մարմնի ղեկավարին (մարզպետին, Երևանի քաղաքապետին)՝ վկայագրման համար:

7. Երեխային դպրոց ընդունելիս պետք է ուսումնասիրել նրա բժշկական գործը և անհրաժեշտության դեպքում ուղարկել ԲՀՄ հանձնաժողով՝ համապատասխան եզրակացություն ստանալու նպատակով:

8. Դպրոցի տնօրենն ապահովում է համապատասխան ուսումնանյութական հարմարեցված միջավայր:

Ներառական կրթության իրականացման փուլ

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի ուսուցման կազմակերպման և արձանագրման (անհատական ուսումնական պլաններ) մեխանիզմների մշակման, նրա՝ պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքների յուրացման, կարողությունների, հմտությունների ձեռք բերման համար անհրաժեշտ պայմանների ապահովման նպատակով իրականացվում են հետևյալ քայլերը՝

1.կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր սովորողի կրթությունը կազմակերպելու համար բազմամասնագիտական խումբը նախապես իրականացնում է սովորողի դիտարկում և հետազոտում: Աշակերտի դիտարկումը և հետազոտումը կատարվում են դասապրոցեսում,

դասամիջոցներին, բակում, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան մասնագետը կատարում է տնայց.

2. բազմամասնագիտական խումբը, դպրոցի տնօրենը և սովորողի ծնողը, ելնելով սովորողի կրթական կարիքներից, կազմում են նրա անհատական ուսումնական պլանը:

Ըստ սովորողների կրթական պահանջների՝ ձևավորվում են համապատասխան խմբեր.

3. բազմամասնագիտական խմբի անդամները կազմում են սովորողների հետ կատարվող անհատական և խմբային աշխատանքների ժամանակացույցները (գրաֆիկները), որոնց համաձայն յուրաքանչյուր մասնագետ իրականացնում է իր գործունեությունը.

4. դպրոցի տնօրենը՝

ա) պետական կրթական չափորոշիչներին, ծրագրերին և սովորողի ԱՈՒՊ-ին համապատասխան ապահովում է սովորողի որակյալ կրթություն ստանալու համար անհրաժեշտ պայմանները.

բ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպում է ներառված սովորողների սնունդը.

գ) անհրաժեշտության դեպքում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, կազմակերպում է ներառված սովորողների տեղափոխումը տնից դպրոց և դպրոցից տուն (դպրոցի սեփական փոխադրամիջոցով կամ ֆիզիկական, իրավաբանական անձանց հետ կնքված պայմանագրերի հիման վրա).

դ) ներառված մտավոր խնդիրներ ունեցող սովորողի ուսումնական չափորոշիչների և ծրագրերի յուրացման արդյունքների հիման վրա իրականացվում է նրա՝ դասարանից դասարան տեղափոխումը:

Աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով շատ կարևոր է բազմամասնագիտական խմբի և մանկավարժական կոլեկտիվի փոխհարաբերությունների և համատեղ աշխատանքի կազմակերպումը: Անհրաժեշտ է դպրոցի ողջ մանկավարժական համակազմին ծանոթացնել ներառական կրթության նպատակներին և բովանդակությանը՝ պարբերաբար կազմակերպելով սեմինար պարապմունքներ: Սեմինար պարապմունքները

կազմակերպում և անցկացնում են բազմամասնագիտական խմբի անդամները (կարող են հրավիրվել այլ մասնագետներ):

Ներառական կրթության համակարգողը պետք է շարունակաբար համագործակցի տնօրենի ուսումնական և դաստիարակչական աշխատանքների գծով տեղակալների, ինչպես նաև առարկայական մեթոդմիավորումների նախա՝հների հետ: Դասվարների և դասղեկների հետ պետք է լինի մշտական համա՝ործակցություն՝ յուրաքանչյուր սովորողի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման նպատակով:

Դպրոցում ներառական կրթություն իրականացնում է ոչ միայն բազմամասնագիտական խումբը, այլ նաև ամբողջ մանկավարժական կոլեկտիվը:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների բժշկահոգեբանամանկավարժական գնահատումը

Ներառական կրթության կազմակերպման նախապատրաստական փուլում պարտադիր գործընթաց է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր սովորողի բժշկահոգեբանամանկավարժական գնահատումը: Ինչպես արդեն նշվել է, այն իրականացվում է ԲՀՄ հանձնաժողովի կողմից հստակ կանոնակարգված ընթացակարգերով:

Եզրակացություն

Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ առանձնահատուկ կրթական կարիքներ ունեցող անձանց համար: Ներառական կրթությունը հանրակրթության զարգացման գործընթաց է, որը ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար, երեխաների ամենատարբեր կարիքների բավարարմանն ուղղված բոլոր տեսակի միջոցների ապահովումը, ինչը հանրակրթական դպրոց մտնելու այցեքարտ է ընձեռում հատուկ կարիքներ ունեցող երեխաներին: Ներառական կրթությանն օժանդակում են ուսուցիչները, ծնողները, առհասարակ, բոլոր նրանք, ում միջամտությունը կարող է այս կամ այն կերպ օգտակար լինել:

Կան բազմաթիվ կրթօջախներ, որոնք աշխատում են ի շահ հատուկ կարիքներ ունեցող երեխաների և լավ են կատարում իրենց աշխատանքը: Եթե ներառական կրթության մեթոդաբանությունը մշակված է ողջ կրթական համակարգի համար, ապա ամեն մի երեխա կգտնի իր տեղն այդ համակարգում, և հնարավոր կլինի դպրոցում սովորելը համատեղ ընտանիքի գրկում ապրելու հետ: Բոլոր երեխաներն էլ կարող են սովորել, պետք է ապահովել համապատասխան պայմաններ նրանց կրթության համար: Դպրոցում երեխաներին միմյանցից առանձնացնելու օրինական հիմքեր չկան:Երեխաները պետք է սովորեն միասին, դա օգտակար կլինի բոլորի համար: Պետք չէ նրանց պաշտպանել միմյանցից:Բոլոր երեխաներին պետք է կրթությունը, որը կօգնի նրանց հարաբերություններ հաստատել և պատրաստվել կյանքին հասարակության մեջ: Միայն ներառական մոտեցումը կարող է նվազեցնել վախը և նպաստել բարեկամության, հարգանքի ու փոխըմբռնման հաստատմանը: Ներառական կրթությունն օգնում է կանխել խտրականությունը երեխաների նկատմամբ՝ սատարելով նրանց բոլորին՝ ինչպես հատուկ կարիքներ ունեցողներին, այնպես էլ չունեցողներին:

Ներառական կրթությունը նպաստում է հասարակության բոլոր անդամների հնարավորությունների հավասարեցմանը՝ հաստատելով, նոր հարաբերություններ և ստեղծագործականհնարավորություններ, որոնք անցյալում անհնար էին: Ներառական կրթությունը մարդու իրավունք է, այն ապահովում է լավ կրթություն և սոցիալական առումով հիմնավորված է:

Գրականություն

1. Ն. Մանուկյան, Վ. Ոսկանյան, Ա. Մուրադյան, Շ. Մաթևոսյան «Ներառական կրթության իրականացման ուղեցույց», Եր., 2008

2. http://inclusion.am

3. http://krtutyun.wordpress.com